Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ «ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Սանահնի վանքը Հայաստանի կարևոր վանքերից է, թե՛ իր ճարտարապետական ճոխությամբ և թե՛ երկրի մշակութային կյանքում իր կատարած դերով։ Ահա այս վանքի պատմության և նրա արձանագրությունների ուսումնասիրմանն է նվիրված Կ. Ղաֆադարյանի վերջին աշխատությունը՝ «Սանահնի վանքը և նրա արձանագրությունները» (Երևան, 1957)։

Սանահնի և Հաղբատի վանքերի երևան գալը պատահական երևույթ չէր Ժ դարում։ Դրանք այն վանքերից են, որոնք հիմնադրվել են այդ դարի նշանավոր հայ թագավորներից մեկի՝ Աշոտ Գ-ի (953—977) և Հայոց Խոսրովանույշ թագուհու ջանքերով։ Սմբատ Ա-ի և Աշոտ Բ-ի խռովահույզ շրջանից հետո, Աբասի և մանավանդ Աշոտ Ե-ի ժամանակ Հայաստանում սկիզբ է առնում բուռն շինարարության մի շրջան, երբ երկրի զանազան կողմերում կառուցվում են նորանոր հուշարձաններ, և վերջապես բարձրանում է այդ բոլորի պսակը կազմող Անին։

Հեղինակը մանրամասնորեն շարադրում է վանքի պատմությունը՝ օգտագործելով բոլոր գոյություն ունեցող աղբյուրները, ինչպես, օրինակ, մատենադրական տվյալները, արձանագրությունները և վանքի մատյանը։

Աշխատությունը բաղկացած է երկու մասից։ Ա մասում շարադրված է վանքի կառուցվածքների նկարագրությունը և վանքի պատմությունը։

Սանահնի վանքը հիմնադրված է 966 թ.։ Վանքի միաբանությունը հիմնադրման ժամանակ բաղկացած է լինում Բյուզանդական կայսրության կրոնական հալածանքներից փախած հայ կրոնավորներից։

Ժ. դարի շինություններից են ս. Աստվածածնա եկեղեցին և Ամենափրկչի տաճարը։ Այս վերջինիս արևելյան պատի վրա գտնվում է ծանոթ բարձրավանդակը, որը, ըստ հեղինակի, պատկերում է ոչ թե Դավիթ Անհողինի երկու որդիներին՝ Կյուրիկեին և Սմբատին, այլ տաճարի հիմնադիր Աշոտ Ե-ի որդիներին՝ Գուրգենին (Կյուրիկեին) և Սմբատին (հետագայում՝ թագավոր հայոց)։ Մագիստրոսի ճեմարանը, ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցին և դրատունը (նշխարատունը) ԺԱ դարում են կառուցված։ ԺԲ դարի վերջերի և ԺԳ դարի սկզբների շինություններն են՝ Զանգակատունը, Ամենափրկչի (1181) և ս. Աստվածածնի (1211) գավիթները։

Հետաքրքրական է վանքի կատարած դերը Հայաստանի մշակութային և եկեղեցական կյանքում։ Սմբատ Ե-ն վանքում հիմնադրում է եպիսկոպոսական աթոռ, հատկացնելով ընդարձակ վիճակ։ Վանքն այնքան նշանակություն է ստանում, որ նրա առաջնորդները նույնիսկ մասնակցում են երկրի քաղաքական գործերին։ Այս հանգամանքը ցույց է տալիս ոչ միայն եկեղեցու ուժեղացումը, ինչպես նշում է հեղինակը, այլև թագավորական իշխանության թուլացումը Բագրատունյաց վերջին հզոր թագավոր Գագիկ Ա-ի մահից հետո։

Սանահնի վանքը երբեք չի կորցրել իր նշանակությունը որպես մշակութային և եկեղեցական կենտրոն, վայելելով Բագրատունիների ու նրանցից սերվող Կյուրիկյանների և ապա Զաքարյանների ու մյուսների հովանավորությունը։

Կարևոր է և շահեկան աշխատության Բ. մասը՝ վիմական արձանագրությունները։

Այս արձանագրությունների հավաքման գործով զբաղվել են նախապես Հովհաննես Ղրիմեցին, Ս. Ջալալյանը, Հ. Քաջբերունին, Ի. Հարությունյանը և ուրիշներ։ Սակայն նրանց աշխատությունները լիակատար չեն և կարիք են զգում ճշտումների։

Այժմ երբ հայագիտությունը հայկական միջնադարյան արձանագրությունների լիակատար հավաքածուի սուր կարիքն է զգում, Կ. Ղաֆադարյանի այս վերջին աշխատությունը մի ավանդ է այդ կարևոր գործում, որովհետև ընդգրկում է Սանահնի վանքի բոլոր արձանագրությունները։

1913 թ. Պետերբուրգում լույս տեսավ Կ. Կոստանյանի կազմած վիմական տարեգիրը։ Թեև այս հավաքածուն չի ընդգրկում նույնիսկ նախապես հրատարակած բոլոր արձանագրությունները, այնուամենայնիվ դա մի քայլ էր ապագա լիակատար ժողովածուի ուղղությամբ։

Արձանագրությունների հրատարակումը պահանջում է նաև գիտական մշակում։ Հեղինակն այս նպատակով նշում է մի քանի կարևոր կետեր, ինչպես, օրինակ՝ արձանագրությունը ներկայացնել առանց որևէ փոփոխության, պահպանելով հնագրական առանձնահատկությունները, ապա տալ նրա լուսանկարը և հետո միայն՝ նրա վերծանությունը և մեկնությունը, նշելով նաև ուրիշների վերծանությունները։ Հենց այս սկզբունքներով է առաջնորդվել և ինքը հեղինակը՝ այս գրքի վրա աշխատելիս։

Արձանագրությունները մեծ նշանակություն ունեն բանասիրության համար, որովհետև նյութ են տալիս թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական կյանքի ուսումնասիրման տեսակետից։

Ժամանակն է ձեռնամուխ լինել հայկական միջնադարյան արձանագրությունների լիակատար ժողովածուի հրատարակմանը, գոնե մեր հանրապետության սահմաններից ներս գտնվող հուշարձանների գծով, մի նպատակ, որին ձգտում է այժմ Հայաստանի Գիտությունների ակադեմիան։

Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ